ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N « ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԲԸԱՀԾՁԲ-09-16/12 »

ք. Երևան « 7 » *սեպտեմբերի* **2016թ.**

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Գ.Պետրոսյանի, որը գործում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հյուր Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Հակոբյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական պատվիրակության այցի կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 30 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 1 218 000 (մեկ միլիոն երկու հարյուր տասնութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2016թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.5 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է պայմանագիր կնքած անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	«Հյուր Սերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Մովսես Խորենացու 3	Ք.Երևան, Նալբանդյան 96
ՀՎՀՀ 02647057	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ » ՍՊԸ
Հ/Հ 900013202016	Հ/Հ 220553331244000
Հ/Հ 900013574018	ՀՎՀՀ 00073368
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Տնօրեն՝
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի	
աշխատակազմի ղեկավարի ժ/պ	
Գ.Պետրոսյան (ստորագրություն)Կ.Տ	Ա.Հակոբյան (ստորագրություն)Կ.Տ

Հավելված 1
« 7 » սեպտեմբերի 2016 թ. կնքված
N «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԲԸԱՀԾՁԲ-09-16/12»
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	Ծառայություն			
Հ/հ	**անվանումը**	**տեխնիկական բնութագիրը**	**Մատուցմանման ժամկետը և վայրը**	**Վճարման պայմանները**
1	Պաշտոնական պատվիրակության ընդունման հետ կապված ծառայություններ	**Տրանսպորտային ծառայության մատուցում՝** 2 անձի համար, այդ թվում՝ 1. Երևանով ճանաչողական էքսկուրսիայի ընթացքում հյուրերի տեղափոխման տրանսպորտային ծառայություններ, 2. Հյուրերի դեպի Գառնի-Գեղարդ տեղափոխման տրանսպորտային ծառայություններ, 3. Հյուրերի դեպի Մատենադարան և Սևանա լիճ տեղափոխման տրանսպորտային ծառայություններ, 4. Հյուրերի դեպի Երևանի կոնյակի գործարան և Մայր Աթոռ Ս.Էջմիածին տեղափոխման տրանսպորտային ծառայություններ: Տրանսպորտային միջոցը պետք է լինի ներկայացուցչական կարգի միկրոավտոբուս	**Ժամկետ՝** 1. 2016թ. սեպտեմբերի 08 (Երևան), 2. 2016թ. սեպտեմբերի 09 (Գառնի և Գեղարդ), 3. 2016թ. սեպտեմբերի 10 (Մատենադարան և Սևանա լիճ) 4. 2016թ. սեպտեմբերի 11 (Երևանի կոնյակի գործարան և Մայր Աթոռ Ս.Էջմիածին) **Վայր՝** 1. «Մարիոթ» հյուրանոց – Երևանի տեսարժան վայրեր - «Մարիոթ» հյուրանոց 2. «Մարիոթ» հյուրանոց – Գառնի - Գեղարդ - «Մարիոթ» հյուրանոց 3. «Մարիոթ» հյուրանոց – Մատենադարան - Սևանա լիճ – «Մարիոթ» հյուրանոց 4. «Մարիոթ» հյուրանոց – Երևանի կոնյակի գործարան – Մայր Աթոռ Ս.Էջմիածին – «Մարիոթ» հյուրանոց	Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո 20 բանկային օրվա ընթացքում
2	Պաշտոնական պատվիրակության ընդունման հետ կապված ծառայություններ	**Մշակութային միջոցառումների կազմակերպում** ՝ Էքսկուրսավարի ուղեկցությամբ խմբային այցելություններ Հայաստանի տեսարժան վայրեր: Խմբերի քանակը՝ 1, բաղկացած 4 անձից: Հուշարձանների/թանգարանների մուտքի վարձը հոգում է Կատարողը: Էքսկուրսիան պետք է վարվի ռուսերենով, նպատակային լսարանը՝ բարձրագույն կրթությամբ (Ղազախստանի պետական եկամուտների գերատեսչության բարձրաստիճան ներկայացուցիչներ):	**1. Ժամկետ՝** 2016թ. սեպտեմբերի 08, ժամը կտեղեկացվի լրացուցիչ, տևողությունը՝ 2.5 ժամ, **Վայր՝** Երևան ճանաչողական: **2. Ժամկետ՝** 2016թ. սեպտեմբերի 09, ժամը կտեղեկացվի լրացուցիչ, տևողությունը՝ 3 ժամ, **Վայր՝** Գառնի և Գեղարդ: **3. Ժամկետ՝** 2016թ. սեպտեմբերի 11, ժամը կտեղեկացվի լրացուցիչ, տևողությունը՝ 2 ժամ, **Վայր՝** Երևանի կոնյակի գործարան և Մայր Աթոռ Ս.Էջմիածին:	Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո 20 բանկային օրվա ընթացքում

3	Պաշտոնական պատվիրակության ընդունման հետ կապված ծառայություններ	**Հուշանվերի տրամադրում՝** 2 հատ Հուշանվերները պետք է լինեն տարբեր, լինեն նվիրված Հայաստանին՝ վերջինիս միջազգայնորեն ճանաչելի մշակութային խորհրդանիշ(ներ)ին, ցանկալի է (ոչ պարտադիր) «Armenia» կամ «Армения» նշագրմամբ: Հուշանվերները պետք է կրեն նախևառաջ մշակութային նշանակություն (կիրառականությունը պակաս կարևոր է), լինեն հարմար օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնատար անձին նվիրելու համար, չունենա միջազգային օդային փոխադրման տեսանկյունից անհարմարավետ հատկություններ (մեծ չափսեր (ծավալ), ծանր քաշ, արագ վնասելի, փխրուն, առանց փաթեթավորման, հեղուկ պարունակությամբ, արտահանման համար արգելված կամ սահմանափակ, և այլն):	**Ժամկետ՝** մինչև 2016թ. սեպտեմբերի 08, **Վայր՝** ք. Երևան, Մ.Խորենացու 7	Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո 20 բանկային օրվա ընթացքում
4	Պաշտոնական պատվիրակության ընդունման հետ կապված ծառայություններ	**Մասնակիցների ընդհանուր լուսանկարի տպագրության կազմակերպում**: A4 չափի լամինացված լուսանկար՝ 10 օրինակից: Լուսանկարը պետք է տրամադրվի Կոմիտեին 09.09.2016թ.-ին: Լուսանկարները պետք է ունենան տպագիր գրառում «г. Ереван - 09 сентября 2016 год»:	**Ժամկետ՝** մինչև 2016թ. սեպտեմբերի 09-ի առավոտյան, **Վայր՝** ք. Երևան, Մ.Խորենացու 7	Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո 20 բանկային օրվա ընթացքում
5	Պաշտոնական պատվիրակության ընդունման հետ կապված ծառայություններ	**Պաշտոնական ընթրիքի կազմակերպում** «Ֆլորենս» ռեստորան ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի անունից, 8 անձի համար	**Ժամկետ՝** 2016թ. սեպտեմբերի 08, ժ.20.00, **Վայրը՝** Հրազդանի կիրճ, Բարբյուսի փող., 64/2	Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո 20 բանկային օրվա ընթացքում:
6	Պաշտոնական պատվիրակության ընդունման հետ կապված ծառայություններ	**Պատվիրակության անդամի սննդի հետ կապված ծախս՝** **Ճաշ** 8 անձի համար՝ 4 անգամ **Ընթրիք** 8 անձի համար՝ 2 անգամ	**Ժամկետ՝** Ճաշ. 1. 2016թ. սեպտեմբերի 08, ժ.15:00, 2. 2016թ. սեպտեմբերի 09, ժ.13:00, 3. 2016թ. սեպտեմբերի 10, ժ.13:00, 4. 2016թ. սեպտեմբերի 11, ժ.12:30, Ընթրիք. 1. 2016թ. սեպտեմբերի 09, ժ.20:00, 2. 2016թ. սեպտեմբերի 10, ժ.20:00. **Վայրը՝** Ճաշ. 1.«Սալոն» ռեստորան (Աբովյան փող. 8) 2.«Ծիրանի Հոմ» ռեստորան (Հյուսիսային պող., 5), 3. Սևանա լճի ափին, 4. Երևանի կոնյակի գործարան (Իսակովի պող., 2) Ընթրիք. 1.«Յանս ակումբ» (Տերյան փող. 76), 2. Սևանա լճի ափին	Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո 20 բանկային օրվա ընթացքում:

7	Պաշտոնական պատվիրակության ընդունման հետ կապված ծառայություններ	**Հյուրանոցային ծախս՝** 2 հոգու համար, յուրաքանչյուրը՝ 3 գիշեր	**Ժամկետ՝** 2016թ. սեպտեմբերի 08-ից 11-ը **Վայրը՝** «Մարիոթ» հյուրանոց	Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո 20 բանկային օրվա ընթացքում
8	Պաշտոնական պատվիրակության ընդունման հետ կապված ծառայություններ	«Մարիոթ» հյուրանոցի փոքր դահլիճի, պրոեկտորի և էկրանի վարձակալություն	**Ժամկետ՝** 2016թ. սեպտեմբերի 09 **Վայրը՝** «Մարիոթ» հյուրանոց	Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո 20 բանկային օրվա ընթացքում

Գնումն իրականացնելիս հիմք է ընդունվում ՀՀ կառավարության 10.09.2009թ.N 1036-Ն որոշումը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մովսես Խորենացու 3
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900013202016
Հ/Հ 900013574018
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
աշխատակազմի ղեկավարի տեղակալ

Գ.Պետրոսյան _____
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Հյուր Սերվիս» ՍՊԸ
Ք.Երևան, Նալբանդյան 96
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ » ՍՊԸ
Հ/Հ 220553331244000
ՀՎՀՀ 00073368
Տնօրեն՝

Ա.Հակոբյան _____
(ստորագրություն)

Հավելված 2
« 7 » սեպտեմբերի 2016 թ. կնքված
N «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԲԸԱՀԾՁԲ-09-16/12»
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ԿԱ ՊԵԿ 2016թ. արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Մինչև 2016 թ. դեկտեմբերի 25-ը	**Ընդամենը Տարի**
1	4237	Տրանսպորտային ծառայության մատուցում՝									**192 000**	**192 000**	**192 000**	**192 000**	**192 000**
2	4237	Մշակութային միջոցառումների կազմակերպում									**24 000**	**24 000**	**24 000**	**24 000**	**24 000**
3	4237	Հուշանվերի տրամադրում՝									**30 000**	**30 000**	**30 000**	**30 000**	**30 000**
4	4237	Մասնակիցների ընդհանուր լուսանկարի տպագրության կազմակերպում:									**10 000**	**10 000**	**10 000**	**10 000**	**10 000**
5	4237	Պաշտոնական ընթրիքի կազմակերպում									**100 000**	**100 000**	**100 000**	**100 000**	**100 000**
6	4237	Պատվիրակության անդամի սննդի հետ կապված ծախս									**256 000**	**256 000**	**256 000**	**256 000**	**256 000**
7	4237	Հյուրանոցային ծախս									**492 000**	**492 000**	**492 000**	**492 000**	**492 000**

8	4237	«Մարիոթ» հյուրանոցի փոքր դահլիճի, պրոեկտորի և էկրանի վարձակալություն									114 000	114 000	114 000	114 000	114 000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մովսես Խորենացու 3
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900013202016
Հ/Հ 900013574018
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
աշխատակազմի ղեկավարի ժ/պ

Գ.Պետրոսյան _____ (ստորագրություն)Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Հյուր Սերվիս» ՍՊԸ
Ք.Երևան, Նալբանդյան 96
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ » ՍՊԸ
Հ/Հ 220553331244000
ՀՎՀՀ 00073368
Տնօրեն՝

Ա.Հակոբյան _____ (ստորագրություն)Կ.Տ

Հավելված 3
« » սեպտեմբերի 2016 թ. կնքված
N «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԲԸԱՀԾՁԲ-09-16/12»
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____

_____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____

_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ *և*
*Պայմանագրի կողմը՝ ի դեմս*_____, *հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
« » սեպտեմբերի 2016 թ. կնքված
N «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԲԸԱՀԾՁԲ-09-16/12»
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն